

**ԺԳ.00.01 – ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ,
ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մանկավարժությունը որպես հումանիտար գիտություն: Մանկավարժության տեսության ձևավորման ու զարգացման սոցիալ-տնտեսական նախադրյալները: Մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում: Մանկավարժության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:

Մանկավարժության նպատակը, խնդիրները և գործառույթները:

Մանկավարժության հիմնական հասկացությունները:

Մանկավարժական գիտությունների համակարգը. ընդհանուր մանկավարժություն, տարիքային մանկավարժություն, դիդակտիկա /ուսուցման տեսություն/, մանկավարժության պատմություն, մասնավոր մեթոդիկաներ, սոցիալական մանկավարժություն, համեմատական մանկավարժություն, մանկավարժական աքսեոլոգիա, մանկավարժական անթրոպոլոգիա, մանկավարժական վալեոլոգիա, համագործակցության մանկավարժություն, էթնոմանկավարժություն, արվեստի մանկավարժություն, երջանկության մանկավարժություն, մանկավարժական ֆուտուրոլոգիա /կանխատեսում/, մանկավարժական դիսկաբանություն, կրթության կառավարում, շտկողական մանկավարժություն. շտկողական մանկավարժության 4 ենթաճյուղերը՝ տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն, օլիգոֆրենո-մանկավարժություն, լոզոպեդիա: Շտկողական մանկավարժության նպատակը և խնդիրները: Ճյուղային. սպորտի մանկավարժություն, բժշկական մանկավարժություն, ռազմական/ զինվորական/ մանկավարժություն:

Մանկավարժության կապն այլ գիտությունների հետ: Ժողովրդավարական և հումանիստական միտումները ժամանակակից մանկավարժության մեջ:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հասկացություն մանկավարժության մեթոդաբանության և նրա մակարդակների մասին՝ փիլիսոփայական (էկզիստենցիալիզմ, նեոթոմիզմ, պոզիտիվիզմ, պրագմատիզմ, դիալեկտիկական մատերիալիզմ), համագիտական (արժեբանական, մարդաբանական, գործունային, մշակութաբանական, էթնոմանկավարժական մոտեցումներ), տեխնոլոգիական (հետազոտության մեթոդիկական և տեխնիկական, մեթոդները, հնարները):

Գիտամանկավարժական հետազոտությունների տրամաբանությունը: Մանկավարժական իրականության հետազոտման մեթոդները և մեթոդիկաները: Մանկավարժության գիտահետազոտական մեթոդները. Դիտում, զրույց, հարցազրույց, անկետավորում, թեստավորում, մոդելավորում, մանկավարժական գիտափորձ, մանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում, տվյալների մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

3. ԱՆՃԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Անձի զարգացումը որպես մանկավարժական հիմնախնդիր: Անձի ձևավորման գործոնները և պայմանները: Անձի դաստիարակության և ձևավորման առանձնահատկությունները: Սոցիալականացման էությունը: Սոցիալականացման գործոնները: Սոցիալականացման փուլերը:

4. ՄԱՆԿԱՎԱՐժԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՐ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Մանկավարժական համակարգ՝ հասկացությունը: Մանկավարժական գործընթացը որպես ամբողջական երևույթ: Մանկավարժական համագործակցություն. ուսուցման և դաստիարակության գործընթացի յուրա-

հատկությունները: Մանկավարժական գործընթացի բաղադրամասերը: Մանկավարժական գործընթացի նախագծման և իրականացման տեխնոլոգիաները: Մանկավարժական գործընթացը որպես նրա մասնակիցների երկխոսություն, համագործակցություն, համաստեղծագործություն:

5. ԴԻՂԱԿՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դիդակտիկան որպես ուսուցման և կրթության տեսություն: Դիդակտիկայի զարգացման պատմական նախադրյալները: Ուսուցման տեսության մեթոդաբանական հիմքերը: Ուսուցման տեսության օրինաչափությունները: Ուսուցման տեսության զարգացման աղբյուրները և մեխանիզմները: Դիդակտիկայի օբյեկտը, առարկան և խնդիրները: Դիդակտիկայի հիմնական հասկացությունները: Կրթության բովանդակության գիտական հիմունքները, ձևավորման աղբյուրները և ընտրության սկզբունքները: Կրթության բովանդակությունն արտահայտող հիմնական փաստաթղթերը: Միջնակարգ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ:

Կրթության մասին ՀՀ օրենքը: Հանրակրթության մասին ՀՀ օրենքը: Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը: ՀՀ հանրակրթության պետական կրթակարգը: Կրթական չափորոշիչներ:

6. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ: ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ

ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ

Ուսուցման գործընթացի էությունը: Ուսուցումը որպես ամբողջական համակարգ: Ուսուցման գործընթացի հիմնական բաղադրամասերը՝ նպատակային, պահանջմունքային-դրդապատճառային, բովանդակային, գործունային-ընթացակարգային, զգայական-կամային, վերահսկող-կարգավորող, գնահատող-ամփոփող:

Ուսուցման գործընթացի գործառույթները՝ կրթական, զարգացնող, դաստիարակչական:

Ուսուցման տեսակները՝ պրոբլեմային, ծրագրավորված, համակարգ-
չային, համակազմային, մոդուլային:

7. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ուսուցման օրենքներն ու օրինաչափությունները: Ուսուցման սկզբունքնե-
րի բնութագիրը: Ուսուցման կրթական, զարգացնող և դաստիարակչա-
կան գործառույթների միասնության սկզբունքը, ուսուցման և դաստիարա-
կության փոխադասարկվածության, ուսուցման գործընթացի ամբող-
ջականության և միասնության, հաջորդականության և համակարգայնու-
թյան, գիտականության, ուսուցման կյանքի հետ կապի, մասշտիբության,
զննականության, գիտակցականության, աշակերտների ակտիվության,
գիտելիքների հաստատունության, սովորողների տարիքային, անհատա-
կան առանձնահատկությունների հաշվառման, տեսության և պրակտի-
կայի կապի, ուսուցման գործընթացի մարդասիրացման սկզբունքները:

8. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հասկացողություն ուսուցման մեթոդի և հնարի մասին: Ուսուցման մեթոդ-
ների դասակարգման մոտեցումները: Ուսումնաճանաչողական գործու-
նեության կազմակերպման մեթոդները: Ուսումնաճանաչողական գործու-
նեության արդյունավետության վերահսկողության և ինքնահսկողության
համապարփակ բնութագիրը: Ուսուցման մեթոդների ընտրությունը:
Ուսուցման մեթոդիկան և տեխնոլոգիան: Ուսուցման միջոցները:
Ուսուցման միջոցների դասակարգումը և բնութագիրը: Համակարգչային
ուսուցում, հեռավար ուսուցում:

Ուսուցման խոսքային, գործնական և զննական մեթոդներ, ինքնուրույն
աշխատանքի մեթոդներ: Ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:
Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն
ուսուցման գործընթացում:

9. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Համագործակցային, ալգորիթմացված և ծրագրավորված, պրոբլեմային, տարբերակված, մոդուլային, նախագծային ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ:

10. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ուսուցման կազմակերպման ձևերը: Ուսուցման ձևերի բազմազանությունը: Ուսուցման կազմակերպման անհատական, խմբային, կոլեկտիվ ձևերը: Անհատական, անհատականացված, փոխադարձ, զանգվածային ուսուցման համակարգը և դրա զարգացումը դիդակտիկայում: Տարբերակված ուսուցում:

Դաս-դասարանային ուսուցման համակարգը: Դաս-դասարանային ուսուցման համակարգի առաջացման և զարգացման պատմությունը: Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև: Դասի էությունը, դասի տիպաբանությունն ու կառուցվածքը: Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները: Դասի գործառույթների իրականացման ուղիները /կրթական, դաստիարակչական, զարգացնող/: Դասի կապն ուսուցման այլ ձևերի հետ /լաբորատոր պարապմունքներ, պրակտիկում, սեմինար, լրացուցիչ պարապմունքներ, տնային աշխատանք/:

Դասի կազմակերպման ոչ ստանդարտ ձևերը: Ուսուցչի նախապատրաստվելը դասին: Դասի պլանավորումը: Դասի վերլուծություն և ինքնագնահատում:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գիտելիքների ստուգման և գնահատման տեղը և գործառույթներն ուսումնական գործընթացում, դրանց օբյեկտիվության վրա ազդող գործոնները:

Ուսումնական արդյունքների ստուգմանը և գնահատմանը ներկայացվող պահանջները, ձևերը, մեթոդներն ու տեսակները: Ուսումնական գործու-

ներության արդյունքների վերլուծությունը: Ուսումնական գործընթացի ախտորոշում:

Գիտելիքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաներ:

12. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԻՆԱԶՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դաստիարակությունը որպես հասարակական-մանկավարժական երևույթ, նրա առանձնահատկությունները: Դաստիարակության և ինքնադաստիարակության նպատակը, բովանդակությունը, պայմանները: Դաստիարակությունը որպես գործընթաց, նրա ընդհանուր օրինաչափությունները և շարժիչ ուժերը: Երեխայի ակտիվության ձևավորումը: Դաստիարակության տեսակները, դաստիարակության ոճերը: Մարդու վրա դաստիարակչական ներգործության միջոցները:

Դաստիարակության համակարգեր: Բազմամշակութային դաստիարակություն: ԱՆճի ձևավորումը դաստիարակչական գործընթացում:

13. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Դաստիարակության սկզբունքների բնութագրումը. դաստիարակության հասարակական ուղղվածությունը, դաստիարակության կապը կյանքի հետ, դաստիարակությունն աշխատանքի մեջ, դաստիարակությունը կոլեկտիվում, դրականի վրա հենվելը, դաստիարակության մարդասիրական բնույթը, անհատական մոտեցումը, մանկավարժական ղեկավարման զուգակցումը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության հետ, դաստիարակչական ներգործությունների միասնությունը, դաստիարակողների և դաստիարակվողների համագործակցությունը, դաստիարակչական գործընթացի հետևողականությունը, համակարգայնությունը և անընդհատությունը, դաստիարակության նպատակի իրատեսականությունը, դաստիարակության անձնային ուղղվածությունը:

14. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Դաստիարակության մեթոդները: Դաստիարակության մեթոդների դասակարգման մոտեցումները: Դաստիարակության մեթոդների դասակարգում՝ կախված հասարակության հումանիզացման և ժողովրդավարացման աստիճանից:

ա/ ավտորիտար դաստիարակության մեթոդներ:

տեղեկացվածություն, մանկավարժական պահանջ, վարժություն, ներշնչում, զրույց, անհատական վերահսկողություն, պատիժ, դատապարտում, ստիպում:

բ/ հումանիստական դաստիարակության մեթոդներ:

մեկնարկային պահանջ, օրինակ, խաղ, համոզում, անձնական օրինակ, դասախոսություն, խրախուսանք, վարժություն, շտկում, բանավեճ /դիսպյուտ/, պարզաբանում, զրույց, գովեստ, մրցակցություն, դաստիարակող իրավիճակ, հեռանկարային գծերի համակարգ, մրցակցության մթնոլորտի ստեղծում, հասարակական փորձի յուրացում:

Դաստիարակության միջոցների բազմազանությունը: Դաստիարակչական աշխատանքի ձևերի ընդհանուր բնութագիրը:

15. ԱՆՁԻ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Աշակերտական կոլեկտիվի կառուցվածքը հանրակրթական դպրոցում: Կոլեկտիվի ձևավորման ուղիները: Կոլեկտիվի զարգացման դինամիկան և փուլերը: Կոլեկտիվ գործունեություն և ինքնակառավարում: Անձի դաստիարակությունը կոլեկտիվում: Աշակերտական կոլեկտիվի ղեկավարման առանձնահատկությունները: Կոլեկտիվի տիպերը:

Ընտանիքը որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա: Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը: Ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացման պայմանները: 'Երեխայի իրավունք-

ներ'-ի հայեցակարգը որպես օրենսդրական և բարոյական հիմք մեծահասակների և երեխաների փոխհարաբերություններում:

16. ՄՏԱՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Մտավոր դաստիարակության նպատակը, խնդիրները և բովանդակությունը: Մտավոր դաստիարակության իրականացման մանկավարժական պայմանները: Մտավոր ընդունակությունների զարգացման մեթոդները և միջոցները:

Աշխարհայացքի էությունը, կառուցվածքը և գործառույթները: Անձի աշխարհայացքը որպես սոցիալական կողմնորոշման անձնային դիրքորոշման և քաղաքացիական վարքագծի հիմք: Աշխարհայացքի հիմնական տիպերը՝ գիտական, կրոնական, առօրեական: Դպրոցականի գիտական աշխարհայացքի ձևավորման հիմնական ուղիները և միջոցները:

Հայացքները, համոզմունքները որպես աշխարհայացքի հիմնական բաղադրիչներ: Գիտական աշխարհայացքի ձևավորման տարիքային առանձնահատկությունները: Կրոնական աշխարհայացք: Դրա տարածման հասարակական և հոգեբանական պատճառները: Եկեղեցու և դպրոցի փոխհարաբերությունները:

17. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասկացողություն բարոյականության մասին: Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը: Բարոյագիտությունը որպես բարոյական դաստիարակության տեսության և պրակտիկայի մեթոդաբանական հիմք: Բարոյական դաստիարակության հասկացությունները, բարոյական գիտակցություն, բարոյական գործունեություն, բարոյական հարաբերություններ և վարքագիծ:

Անձի բարոյական մշակույթի էությունը՝ զգայական ոլորտի, բարոյական գաղափարների, պահանջմունքների, արժեքային համակարգի զարգացվածությունը:

18. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավական դաստիարակության նպատակը, խնդիրները: Իրավական դաստիարակության համակարգը՝ իրավական մշակույթ, իրավագիտակցություն, իրավական մտածողության զարգացում, իրավական գիտելիքներ: Դպրոցականների իրավական դաստիարակության մանկավարժական պայմանները:

19. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գեղագիտական դաստիարակության էությունը, խնդիրները և բովանդակությունը: Անձի գեղագիտական մշակույթի կառուցվածքը՝ գեղագիտական պահանջմունք, գեղագիտական գիտելիք, արժեքային կողմնորոշում, գեղագիտական զգացմունք, ճաշակ, գեղագիտական իղեալ: Գեղագիտական մշակույթի ձևավորման ուղիները և մեթոդները հանրակրթական դպրոցում:

20. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական դաստիարակության նպատակը, խնդիրները: Քաղաքացիականության կառուցվածքը. սեփական արժանապատվության զգացում, ազգային ինքնագիտակցություն, հարգանք իր երկրի քաղաքացու նկատմամբ, պարտականությունների կատարում: Հայրենասիրությունը որպես քաղաքացիական դաստիարակության կարևոր բաղադրիչ: Քաղաքական մշակույթի դաստիարակումը որպես քաղաքացիական դաստիարակության բաղադրիչ: Քաղաքական մշակույթի ցուցանիշները՝ քաղաքական գրագիտություն, քաղաքական գիտակցություն, հասարակական ակտիվություն:

21. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Աշխատանքային դաստիարակության բովանդակությունը դպրոցում, նպատակը, խնդիրները, էությունը: Սեր և հարգանք աշխատանքի նկատմամբ, աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորում:

Աշխատանքային դաստիարակության համակարգը դպրոցում՝ «Տեխնոլոգիա» առարկան որպես աշխատանքային դաստիարակության միջոց: Դասարանական և արտադրական աշխատանքի հանրօգուտ գործունեության կազմակերպումը դպրոցում:

Մասնագիտական կողմնորոշման համակարգը՝ մասնագիտական կրթվածություն, մասնագիտույան նախագծում, մասնագիտական կողմնորոշում, մասնագիտության ընտրություն:

22. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձի ֆիզիկական դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը: Գիտակից վերաբերմունք առողջ ապրելակերպի նկատմամբ, առողջության պահպանում, ֆիզիկական ինքնակատարելագործում, հիգիենայի կանոնների պահպանում, սնվելու մշակույթ, սեփական օրգանիզմի կենսառիթմերի ճանաչում:

Ֆիզիկական դաստիարակության միջոցները՝ բուժիչ ֆիզիկական, սպորտային մասսայական աշխատանքներ դպրոցում, արտադպրոցական աշխատանք: Ֆիզիկական ինքնակատարելագործում:

23. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիական դաստիարակության տեղը դաստիարակության ընդհանուր գործընթացում: Էկոլոգիական դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը հանրակրթական դպրոցում: Էկոլոգիական կրթությունը որպես մարդասիրական-գործունային հարաբերությունների ձևավորման գործընթաց բնության և մարդու նկատմամբ: Էկոլոգիական կրթության խնդիրները, ձևերը, մեթոդներն ու միջոցները:

24. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագիտական դաստիարակության նպատակը, խնդիրները: Տնտեսագիտական դաստիարակության տեղը դաստիարակության ընդհանուր գործընթացում:

Տնտեսագիտական հասկացություններ: Տնտեսագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Գործունեության պլանավորում, արտադրողականության հաշվառում և վերահսկողություն: Շուկայագիտության հիմունքներ: Տնտեսավարման համակարգեր: Բյուջե. ձևավորման միջոցները: Տնտեսագիտական դաստիարակությունը աշխատանքային ուսուցման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005:
2. Ասատրյան Լ.Թ. և ուրիշներ, Կրթության համակարգի կառավարման հիմունքները, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2003:
3. Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Եր., «Տոներ», 2005:
4. Бордовская Н.В., А. А. Реан, Педагогика, М., 2006.
5. Коджаспирова Г.М., Педагогика, М., 2004.
6. Педагогика: под ред. Пидкасистого П.И.-М., 2005.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Ղույունյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Եր., 2005:
2. Պետրոսյան Հ.Հ. Կրթության ժամանակակից տեխնոլոգիաներ: Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, Երևան, «Ան-Ջոն», 2008:
3. Слостенин В.А. и др. Педагогика: учебное пособие для студентов педагогических учебных заведений. М., 1998.
4. Подласий И.П. Педагогика: учебник для студентов высших педагогических учебных заведений.-М., 2006.
5. Кукушин В.С., Теория и методика воспитательной работы, Ростов-на Дону, 2002.

Օժանդակ, լրացուցիչ

1. Ազարյան Ռ.Ն., Սարգսյան Զ.Վ., Ինչպես լավացնել տեսողությունը, Եր., 1994:

2. Ազարյան Ռ.Ն., Տեսողության խանգարումով երեխաների առաողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա, /Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար/, Եր. 2008, 119 էջ:
3. Ամիրջանյան Յու. Ժամանակակից դիդակտիկա, «Լույս», Ե., 1990:
4. Հանրակրթության պետական կրթակարգ, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2004:
5. Մանուկյան Վ. «Լսողության խանգարում ունեցող երեխաների հետ տարվող սուրդոմանկավարժական աշխատանքները», Երևան 2008:
6. Պայլոզյան Ժ.Հ., Թադևոսյան Է. Ռ. Հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքի հեռանկարային պլաններ. Եր., 2004, 2007:
7. Վարդումյան Ս., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Եր., «Նոյան տապան», 2005:
8. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջադինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, «Նոյան տապան», 2005:
9. Алексеев Н.А. Личностно-оринетированное обучение. Вопросы теории и практики.-М., 1995.
10. Андреева Л.В. Сурдопедагогика . М., 2005.
11. Белущенко В.А., Наумова А. Е., Седова М. Ю. Педагогическая реабилитация детей с нарушением слуха: Метод.пособие. СПб., 2006.
12. Бородулина С.Ю. Коррекционная педагогика. Ростов на Дону, 2004
13. Визель Т.Г. Мозговая организация речевой функции и ее нарушения – М., 2004.
14. Обучение детей с нарушениями интеллектуального развития (олигофренопедагогика), под.ред. Пузанова Б.П., М. 2000.
15. Оконь В. Введение в общую дидактику.-М., 1993.
16. Подласый И.П. Курс лекций по коррекционной педагогике, М., 2002.
17. Селевко Т.К. Современные образовательные технологии. М., 1998.
18. Слостенин В.А. Педагогика: инновационная деятельность.-М., Магистр, 1997-4.
19. Специальная педагогика, под. ред. Е.А.Стребелевой- М. 2001.
20. Рапацевич Е.С. Педагогика: большая современная энциклопедия. – Минск: ИООО “Современное слово”, 2005.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Դաստիարակության ծագումը: Կրթության և մանկավարժական միտքը հին աշխարհում: Դաստիարակության ձևերը նախնադարում:

Առաջին կրթադաստիարակչական համակարգերի ձևավորումը: Դպրոցը և դաստիարակությունը Հին Արևելքի երկրներում՝ Շումեր, Աքքադիա, Եգիպտոս, Բաբելոն, Չինաստան, Ասորեստան, Պարսկաստան, Հայաստան:

Կրթությունը հին աշխարհում (Աթենք և Սպարտա), Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Դեմոկրիտի մանկավարժական գործունեությունն ու հայացքները:

2. Դաստիարակությունը Հին Հռոմում: Մարկ Ֆաբի Քվինթիլիանոսի մանկավարժական հայացքները:

Դաստիարակությունը Հայաստանում հին ժամանակներից մինչև մ.թ. 4-րդ դարի վերջ:

3. Կրթությունը և մանկավարժական միտքը միջնադարում՝ Եվրոպայում: Միջնադարի քրիստոնեական փիլիսոփայությունը և կրոնաբարոյական արժեքները: Թոմա Ակվինացու փիլիսոփայական և մանկավարժական հայացքները: Շերտավորված կրթության բնութագիրը միջին դարերում: Ասպետական դաստիարակություն: Եկեղեցու դերը միջնադարյան կրթության գործում: Եկեղեցիական դպրոցներ: Աստվածաբանական դպրոցներ: Արիեստավորական և համայնքային դպրոցներ: Առաջին համալսարաններ:

Միջնադարյան համալսարանների ձևավորումը 12-13-րդ (Բոլոնիա, Սորբոն, Պրահա, Կրակով, Օքսֆորդ, Քեմբրիջ, Լիսաբոն, Վիեննա):

Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարյան Հայաստանում: Մ. Մաշտոցի կյանքն ու մանկավարժական գործունեությունը: Հետմեսրոպյան շրջանի մանկավարժական միտքը (Եգ. Կողբացի, Դ. Անհաղթ, Ա. Շիրակացի):

4. Վերածննդի դարաշրջանի կրթությունը ու մանկավարժական միտքը: Է. Ռոտերդամցի, Վիտտորինո դա-Ֆելտրե, Ֆ. Ռաբլե, Թ. Մոր, Թոմագո Կամպանելլա:

Հայկական վերածննդի դարաշրջանի դպրոցը և մանկավարժական միտքը (10-րդ դարավերջ և 12-րդ դարի սկիզբ): Գր. Նարեկացի, Գր. Մագիստրոս, Հովհ. Սարկավազ Իմաստասեր: Հայկական բարձր տիպի դպրոցների և համալսարանների ձևավորումը (Հաղպատ, Անի, Գլաձոր, Տաթև, Սիս, Կապոս):

5. Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը:

Յան Ամոս Կոմենսկի, նրա դերը մանկավարժության՝ որպես ինքնուրույն գիտության կայացման գործում:

Ջոն Լոկի փիլիսոփայական և մանկավարժական հայացքները: Ֆրանսիացի լուսավորիչներ՝ Դենի Դիդրո, Կլոդ Ադրիան Հելվեցիուս:

Ժ.Ժ. Ռուսոյի մանկավարժական հայացքները: Տարիքային շրջաբաժանում, բնական և ազատ դաստիարակություն, կանանց կրթության և դաստիարակության հարցերը:

6. Մանկավարժությունը 19-20-րդ դարերում:

Ի.Հ. Պեստալոցցու մանկավարժական գործունեությունը: Ուսուցման ժողովրդավարական սկզբունքները:

Ի.Ֆ. Հերբարտի մանկավարժական համակարգը: Ավտորիտար դաստիարակության համակարգը: Ուսուցման հոգեբանական մեխանիզմները:

Ֆ.Ա. Դիստերվեգի մանկավարժական գործունեությունը և հայացքները: Զարգացնող կրթության հայեցակարգը:

Ֆրյոբելի նախադպրոցական դաստիարակության տեսությունը:

Ռ. Օուենի լուսավորչական գործունեությունը: <<Աշխատանքային դպրոցի>> գաղափարի առաջադրումը:

Կ.Դ. Ուշինսկու մանկավարժական հայացքները:

Նոր շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքը (19-րդ դ.): Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Մ. Մամուրյան, Ս. Մանդինյան, Ա. Բահաթրյան, Ռ. Պերպերյան: Դպրոցը Արցախում և հայ գաղթավայրերում: Իգական դպրոցների կազմակերպումը, Ծաղկոց-մանկապարտեզների կազմակերպումը. Ս. Բաբայան, Գ. Հովհաննիսյան, Ս. Արղության-Երկայնաբազուկ:

7. Նորագույն շրջանի արևմտաեվրոպական և խորհրդային դպրոցն ու մանկավարժական միտքը: Ռ. Շտայների կյանքն ու մանկավարժական համակարգը: Մ. Մոնտեսորի կյանքն ու մանկավարժական համակարգը: Փորձարարական մանկավարժություն /Է. Մեյման, Է. Թորնդայք/: Նոր շրջանի ամերիկյան կրթությունը ու մանկավարժական միտքը: Ջոն Դյուրի մանկավարժական համակարգը:

Բ. Բլումի մանկավարժական համակարգը. ուսուցման տաքսոնոմիա: Խորհրդային մանկավարժություն. Ս. Տ. Շացկի, Ա.Ս. Մակարենկո, Վ.Ա. Սուխոմլինսկի: Վիզոսուկու հոգեբանամանկավարժական համակարգը:

8. Կրթությունը ժամանակակից աշխարհում:

Կրթության ազգային համակարգերի ինտեգրացման գործընթացը: Եվրոպական միասնական կրթական տարածքի ձևավորման գործընթացը /ընդհանուր հետազոտական, կրթական, մշակութային տարածք/:

Հետխորհրդային շրջանի կրթական տարածքի ձևավորումը: Ուսուցման գործընթացի հումանացումը: Հանդուրժողականության դաստիարակությունը: Այլընտրանքային դպրոցներ: Մասնավոր դպրոցներ:

Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ներդրումը՝ «բակալավրիատ», «մագիստրատուրա»: ՀՀ-ի ինտեգրումը բոլոնյան գործընթաց: Հետբուհական կրթության համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ն.Հարությունյան, Առաքել Բահաթրյան, Եր., 1992:
2. Մովսիսյան Ա.: Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն: Երևան, 1958:
3. Շավարշյան Ա. Հայ մանկավարժներ, հ. 1.2., Եր., 1958-1961:
4. Вершинина, Н.А. История педагогики как науковедческая дисциплина Изд.Рос.гос.пед.ун-та им. А.И. Герцена Сер. Психол.-пед.науки. - 2007. - №8.- С.56-68. -
5. История педагогики и образования. От зарождения воспитания в первобытном обществе до конца XX в. [Текст]: учеб. пособие / Под ред. А.И. Пискунов. - 2-е изд., испр. и доп. - М. : Сфера, 2005. - 512 с.
6. История педагогики: учебник для аспирантов и соискателей учен. под ред. Н.Д. Никандрова. – М., 2007.
7. Латышина, Д.И. История педагогики. История образования и педагогической мысли [Текст]: учеб. пособие. - М., 2002. - 603 с.
8. Попов, В.А. История педагогики и образования [Текст]: учеб. пособие для студентов вузов ред. В. А. Слостенин. - М.: Академия, 2010. - 203с.
9. Старикова, Л.Д. История педагогики и философия образования [Текст]: учеб. пособие для студентов - Ростов н/Д: Феникс, 2008. - 435с.
10. Шацкий С.Т. Педагогические сочинения, Т. 1.2.3.4, М. 1962,1964.1965.

**ԺԳ.00.02 – ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
(ԸՍՏ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎՈՆԵՐԻ)**

Ընդհանուր դրույթներ

Տվյալ ոլորտում գիտահետազոտական աշխատանք ծավալելու և կազմակերպելու ունակություն: Գիտական, կրթական, կառավարման, տեխնիկական ոլորտներում նորարարական գործունեություն ծավալելու հմտություն: Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդները, հնարները, տեխնոլոգիաները տարբեր ուսումնադաստիարակչական իրադրություններում կիրառելու, ինչպես նաև դրանք դասակարգելու, համակարգելու, նոր մեթոդաբանական դիրքերից ներկայացնելու ունակություն:

Ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն:

Միջառարկայական, ներառարկայական կապերի ապահովման մակարդակում մասնագիտական առարկայի դասավանդման մեթոդների ընտրության և կիրառման ունակություն:

Մեթոդաբանական, մեթոդական իրազեկություն /դպրոցական, բուհական և հետբուհական համակարգեր/:

Ինքնուրույն գիտահետազոտական և մանկավարժական գործունեության հմտությունների ձևավորում:

Մանկավարժական գիտության տեսական և գործնական հիմքերի ուսումնասիրության կարողություն: Գիտության և մասնագիտական գործունեության ոլորտներում ընդհանուր մանկավարժական, դիդակտիկական և համապատասխան առարկայի դասավանդման մեթոդական գիտելիքների, կարողությունների, հմտությունների կատարելագործում:

Տվյալ ոլորտում արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար անհրաժեշտ իրազեկումների ձևավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ, Ազգային զեկույց, «Լինգվա», Երևան, 2008:
2. Բազմալեզու կրթությունը ժամանակակից աշխարհում, «Լինգվա», Երևան, 2008:
3. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Ջոյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., Խմբ.՝ Ս. Ջոյան, Մելանյա Աստվածատրյան և ուրիշ., Եր., Նորք Գրատուն, 2005:
4. Cadre européen commun de référence pour les langues: enseigner, évaluer, apprendre. Strasbourg, Didier, 2001.
5. Common European Framework of Reference: Teaching, Learning, Assessment. CoE, Strasbourg, 2001.
6. Holec H., Little D., Stratégies dans l'apprentissage et l'usage des langues. CDCC, 1996.
7. Plurilingual Education in Europe. Language Policy Division, Strasbourg, 2007.
8. Scrivener Jim Learning Teaching: A guidebook for English language teachers, Macmillan Publishers Limited. – 2005. 431p.
9. Гальскова Н.Д., Гез Н.И. Теория обучения иностранным языкам. Лингводидактика и методика, М., “Академия”, 2004.
10. Колкер Я.М. и др. Практическая методика обучения иностранному языку, М., “Академия”, 2004.
11. Современные теории и методики обучения иностранным языкам. М., Экзамен, 2004.

* ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /ըստ բնագավառների/ մասնագիտությամբ մասնագիտական քննության ժամանակ սույն ծրագրին համապատասխան կազմված հարցաշարին պետք է հավելել նաև հարցեր տվյալ ատենախոսությանը համապատասխան բնագավառից: